ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 25-ին, երեքշաբթի օրը, Ս. Գայանե եկեղեցում Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սերայդարյանը ս. պատարագի ընթացքում քահանա է ձեռնադրում Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի շրջանավարտ Ալեքսան սրկ. Թալայանին:

Առավոտյան ժամերգության ժամանակ կատարվում է քահանայացուի կոչման կարգը, իսկ ս. պատարագի ընթացքում՝ քահանայական ձեռնադրության և օծման կարգը:

Ալեքսան սրկ. Թալայանը վերանվանվում է Տ. Եղիա քահանա:

Տ. Եղիա քահանան իր քառասունքը կանցկացնի Մայր Աթոռում:

Տ. Եղիա քհն. Թալայան. Ծնվել է 1958 թ. Վրացական ՍՍՀ-ի Բոգդանովկայի շրջանի Օրուջալար գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի հայկական դպրոցում: 1977 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան և այն ավարտել 1982 թ.: 1981 թ. դեկտեմբերի 26-ին Էջմիածնի Մայր տաճարում ձեռնադրվել է սարկավագ:

Տ. Եղիա քահանան Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ պաշտոնի է կոչվել Թբիլիսիի հայոց Ս. Էջմիածին եկեղեցում՝ որպես ծիսակատար քահանա: